ազգ արարին յԵրուսաղէմ զմահ Փոխանորդին եւ Թէոդորոս Պատրիարք որոշեաց 'ի տեղի նորա զԱդրիանուպոլսեցի զՊօղոս վարդապետ Նուիրակն Զմիւռնիոյ՝ որ և հասեալ էր 'ի Մխալիճ, և գրեաց առ նա հարկեցուցիչ բանիւ փութով հասանիլ 'ի Կոստանդինուպոլիս 'ի գլուխ պաշտօնի իւրոյ, որ և Նորա թողեալ զառաջին պաշտօնն եհաս անդր։ Եւ սկիզբն արար ջանասէր մտօք անդադար աշխատիլ և դեգերիլ հանապազ 'ի դրունս մեծամեծաց, նոյնպէս և գլխաւորք ազգին առ իւրաքանչիւր ծանօթս իւրեանց, թախանձէին լրումն տալ գործոյն։ Ոմանք 'ի նախարարաց կամելով հաճել զմիտս Հայոց՝ խոստացան տալ հրովարտակ ինչ և յանձն առնել նոցա չինել զբաժին տեղիս իւրեանց, ընդ որ զուարթացեալ Հայոց՝ ըստպասէին յօրէ օր 'ի ձեռս բերել զայն։ բայց իբրեւ ծանեան առանձին զմիտս խոստացեալ հրովարտակին՝ 'ի ձեռն հաւատարիմ արանց, որ առաւել նպաստաւոր էր Յունաց քան Հայոց և առիթ ապագայ ինասուց և մեծամեծ խրոովութեանց, բազում աշխատութեամբ հաղիւ ուրեմն կարացին 'ի բաց թողուլ զայն, յորմէ վշտացան մեծամեծք դրանն, և թշնամանօք վարէին ընդ Հայս՝ որք համարձակէին մերձենալ առ նոսա, որոյ վասն հարկ էր տեղի տալ ժամանակ ինչ՝ և սպասել փոփոխութեան պաշտօնէից։

Թէոդորոս Պատրիարք եւ միաբանք իւր՝ չկարացեալ հանդարտիլ 'ի խռովութենէ Յունաց՝ առաքեաց 'ի Կոստանդինուպոլիս զՊաղտասար եպիսկոպոս Փակակալ սուրբ Յակոբայ, զՄատթէոս վարդապետ հանդիսադիր լուսոյ, զԴիոնէսիոս վարդապետ՝ Քարտուղար իւր՝ այր բանիբուն և ճարտար՝ հմուտ ներքին և արտաքին գործոց Աթոռոյն, և հոգացեալ զկէս ճանապարհի նոցին, յանձն արար ըստայր տումարն ելից և մտից Աթոռոյն՝ սկսեալ յաւուրց անտի Պետրոս Պատրիարքի՝ և զտումար եկեղեցական զարդուց, որպէս խնդրեալ էին յառաջագոյն գլխաւորք ազգին։ և գրեաց առ նոսա տեսանել զՀաչիւ երկուց Պատրիարքաց՝ զմիին և զտարակուսելի բանս և զայլ կարեւոր խնդիրս հարցանել 'ի վարդապետաց անտի, որք կարող էին տալ բացատրութիւն ամենայն հանդամանաց խնդրոյն՝ և փութանակի դարձուցանել յետս (Մայիս 8—18)։ Մեկ-